Ծանուցում

2021թ մայիսի 13-ի ժամը 13^{00}-ին գումարվող ԱՄԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին

ԱՄԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Տնօրենների խորհրդի 20.04.2021թ. նիստում որոշում է ընդունվել 2021թ-ի մայիսի 13-ին, ժամը 13^{00}-ին գումարել ԱՄԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ: Ժողովն անցկացվելու է Ընկերության վարչական շենքում՝ ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2021թ ապրիլի 21-ի դրությամբ:

Ընկերության բաժնետերերի 2021թ մայիսի 13-ին ժամը 13^{00}-ին գումարվող ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևալ հարցերը.

1. ԱՄԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին (այդ թվում քվեաթերթիկներին) կարելի է ծանոթանալ և ձեռք բերել աշխատանքային օրերին՝ 2021թ ապրիլի 26-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ Ընկերության կադրերի բաժնում ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}:

Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովին մասնակցելու համար բաժնետերը (անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով) կամ նրա կողմից լիազորված անձը (լիազորությունը հաստատված Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի և Բաժնետիրական ընկերությունների մասին Հայսատանի հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան) պետք է 2021թ մայիսի13-ին ժամը 11^{00}-ից մինչև 12^{45}-ը գրանցվի ժողովի մասնակիցների գրանցամատյանում: Գրանցումից անմիջապես հետո կտրամադրվեն ժողովի օրակարգում ներառված հարցերի քվեաթերթիկները:

ԱՄԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Տնօրենների խորհուրդ